Նախագիծ 59

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

------- 2001թ. N

ՀՀ կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Հիմք ընդունելով ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և նպատակ ունենալով հողամասերի նպատակային նշանակության փոփոխման կարգը՝ կիրառելով մեկ պատուհանի սկզբունքը, ՀՀ կառավարությունը որոշում է.

1. ՀՀ կառավարության 2001թ. հունվարի 17-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 30 որոշմամբ հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կարգի 5-րդ կետի «ՀՀ քաղաքաշինության նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության հետ սահմանված կարգով համաձայնեցնելուց հետո, իր եզրակացության հետ միասին ներկայացնում է ՀՀ կառավարություն» բառերը փոխարինել «իր եզրակացության հետ միասին 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է ՀՀ տարածքային կառավարման նախարարություն»:

2) Կարգը 5-րդ կետից հետո լրացնել 5.1, 5.2, 5.3, 5.4 կետեր հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Նախարարությունը տեքստային և գրաֆիկական նյութերը սահմանված կարգով ստանալուց 3 աշխատանքային օրվա ընթացքում կազմում և ուղարկում է կարծիքի ՀՀ քաղաքաշինության, ՀՀ բնապահպանության, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների, ՀՀ մշակույթի նախարարությունների և ՀՀ

կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե համապատասխան հողամասի կատեգորիայի փոփոխման որոշման նախագիծ: Նշված պետական մարմինները «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Նախագահի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրով սահմանված կարգով՝ հնգօրյա ժամկետում կարծիքներ են տալիս նախագծի վերաբերյալ:»:

5.2. Եթե սույն որոշման 5.1-րդ կետում սահմանված ժամկետում հողամասի կատեգորիայի փոփոխման որոշման նախագծի վերաբերյալ կարծիք չի ներկայացվում նախարարություն, ապա այն համարվում է դրական:

5.3. Հողամասի կատեգորիայի փոփոխման որոշման նախագծի վերաբերյալ բացասական կարծիք ներկայացնելիս կցվում է համապատասխան հիմնավորում՝ հղում կատարելով այն իրավական ակտերին, որոնք հիմք են հանդիսացել բացասական կարծիքի ձևավորման համար:

5.4. Նախարարությունը կարծիքներն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ամփոփում է ստացված կարծիքներն ու առաջարկությունները, անհրաժեշտության դեպքում հողամասի նպատակային նշանակության փոփոխման որոշման նախագծում կատարում է համապատասխան փոփոխություններ և ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՀ կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

Ներկայացված որոշման նախագիծը հնարավորություն է տալիս հողամասի նկատմամբ իրավունքներ ունեցող սուբյեկտներին առանց ավելնորդ վարչարարության և ժամանակի կորստի լուծել հողամասի նպատակային նշանակության փոփոխման խնդիրը:

Գործող կարգը ենթադրում է հողամասի նպատակային նշանակության փոփոխման փաստաթղթերի համաձայնեցում ՀՀ քաղաքաշինության, ՀՀ բնապահպանության, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների, ՀՀ մշակույթի նախարարությունների և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ թե մարզպետի կողմից, թե ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ սահմանված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովում: Ընդ որում միջգերատեսչական հանձնաժողովում ներառված պետական մարմինների համար կարծիքների ներկայացման ժամկետ սահմանվել է 2 աշխատանքային օրը, որը սակայն գործնականում չի պահպանվում: Իսկ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգի 5-րդ կետում ընդհանրապես համաձայնեցման կարգ և ժամկետներ սահմանված չեն:

Որոշման նախագծով առաջարկվում է սահմանել կարծիք ներկայացնելու հստակ ժամկետներ, իսկ այդ ժամկետում չներկայացնելը համարվելու է դրական կարծիք: Բացասական կարծիք ունենալու դեպքում անհրաժեշտ կլինի հիմնավորել և համապատասխան հղումներ կատարել իրավական ակտերին, որոնք հիմք են հանդիսացել բացասական կարծիք ձևավորելու համար: ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը եռօրյա ժամկետում ստացված թե դրական, թե բացասական կարծիքներն ամփոփելուց հետո բոլոր նյութերը ներկայացնելու է ՀՀ կառավարության աշխատակազմ: